



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk
www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

18th October 2020

Bulletin 42/2020

Sixth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 4:3-18

Նոյնպէս ալ մենք, երբ մանուկ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ստրուկ էինք: Բայց երբ ժամանակը լրումին հասաւ, Աստուած որկեց իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ եւ Օրէնքին տակ մտաւ, որպէսզի փրկանքով գնէ Օրէնքին տակ եղողները. որպէսզի մենք որդեգրութիւնը ստանանք: Եւ քանի որ դուք որդիներ էք, Աստուած ձեր սիրտերուն մէջ որկեց իր Որդիին Հոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա՛, Հայր»: Հետեւաբար ա՛լ ստրուկ չես, հապա՛ որդի. ու եթէ որդի, ուրեմն՝ Աստուծոյ ժառանգորդը Քրիստոսի միջոցով:

Ուրեմն այն ատեն երբ չէիք ճանչնար Աստուած, կը ծառայէիք անոնց՝ որ բնութեամբ աստուածներ չէին: Սակայն հիմա որ ճանչցաք Աստուած, կամ մա՛նաւանդ՝ ճանչցուեցաք Աստուծմէ, ի՛նչպէս կը վերադառնաք այն տկար եւ աղքատ սկզբունքներուն, որոնց դարձեալ կ'ուզէք ստրուկ ըլլալ: Կը պահէք օրերը, ամիսները, ժամանակներն ու տարիները. **11** կը վախնամ ձեզի համար, որ գուցէ զուր տեղը աշխատած ըլլամ ձեր վրայ:

Եղբայրներ, կ'աղերսեմ ձեզի, ինծի՛ պէս եղէք, որովհետեւ ես ալ ձեզի պէս եղայ. դուք բնա՛ւ վնասած չէք ինծի: Դուք գիտէք թէ ի՛նչպէս՝ մարմինիս տկարութեամբ՝ աւետարանեցի ձեզի առաջին անգամ. բայց մարմինիս վրայ կրած փորձութիւնս չանարգեցիք, ո՛չ ալ պժգացիք. հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս ընդունեցիք զիս, Քրիստոս Յիսուսի պէս: Ուստի ո՛ր է՝ ձեր այդ ատենուան երանութիւնը. քանի որ ես կը վկայեմ ձեզի թէ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը պիտի խլէիք եւ զանոնք ինծի տայիք: Միթէ ձեր թշնամի՛ն եղայ՝ ձեզի ճշմարտութիւնը խօսելով: Անոնք նախանձախնդիր են ձեզի հանդէպ, բայց ո՛չ բարի նպատակով. նոյնիսկ կ'ուզեն մեզ վտարել, որպէսզի նախանձախնդիր ըլլաք իրե՛նց հանդէպ: Սակայն լաւ է նախանձախնդիր ըլլալ բարիին հանդէպ՝ ամէն ատեն, եւ ո՛չ թէ միայն երբ ձեր մէջ ներկայ եմ:

The Epistle of St Paul to the Galatians 4:3-18;

But when the set time had fully come, God sent his Son, born of a woman, born under the law, to redeem those under the law, that we might receive adoption to sonship. ^b Because you are his sons, God sent the Spirit of his Son into our hearts, the Spirit who calls out, “Abba, ^c Father.” So you are no longer a slave, but God’s child; and since you are his child, God has made you also an heir.

Paul's Concern for the Galatians

Formerly, when you did not know God, you were slaves to those who by nature are not gods. But now that you know God—or rather are known by God—how is it that you are turning back to those weak and miserable forces ^d? Do you wish to be enslaved by them all over again? You are observing special days and months and seasons and years! I fear for you, that somehow I have wasted my efforts on you.

I plead with you, brothers and sisters, become like me, for I became like you. You did me no wrong. As you know, it was because of an illness that I first preached the gospel to you, and even though my illness was a trial to you, you did not treat me with contempt or scorn. Instead, you welcomed me as if I were an angel of God, as if I were Christ Jesus himself. Where, then, is your blessing of me now? I can testify that, if you could have done so, you would have torn out your eyes and given them to me. Have I now become your enemy by telling you the truth?

Those people are zealous to win you over, but for no good. What they want is to alienate you from us, so that you may have zeal for them. It is fine to be zealous, provided the purpose is good, and to be so always, not just when I am with you.


2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 4 :14-23

Յիսուս Հոգիին զօրութեամբ վերադարձաւ Գալիլեա, եւ անոր համբաւը տարածուեցաւ այդ գաւառին ամբողջ շրջակայքը: Ինք կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ, ու կը փառաւորուէր բոլորէն:

Երբ եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, իր սովորութեան համաձայն Շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու կանգնեցաւ որ կարդայ: Տուին անոր Եսայի մարգարէին գիրքը: Երբ բացաւ գիրքը, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր.

«Տէրոջ Հոգին իմ վրաս է. որովհետեւ օծեց զիս աղքատներուն աւետարանելու, որկեց զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն՝ ազատ արձակելու եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու, Տէրոջ բարեհաճութեան տարին յայտարարելու»: Յետոյ գոցեց գիրքը, տուաւ սպասաւորին, ու նստաւ: Բոլոր ժողովարանը եղողները իրենց աչքերը սեւեռած էին անոր վրայ: Ուստի սկսաւ ըսել անոնց. «Այսօր այս գրուածը իրագործուեցաւ, ու ձեր ականջները լսեցին»: Բոլորը կը վկայէին անոր մասին, կը զարմանային անոր բերանէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, եւ կ'ըսէին. «Ասկա Յովսէփի որդին չէ՞»: Ինք ալ ըսաւ անոնց. «Իրաւ դուք ինծի պիտի ըսէք սա՛ առածը. “Բժիշկ, դուն քեզ բուժէ: Ո՛րչափ բաներ լսեցինք՝ որ Կափառնայումի մէջ կատարուեցան. հո՛ւ ալ ըրէ՛ քո՛ւ բնագաւառիդ մէջ»»:



Christ's Visit to Nazareth

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 4:14-23 Jesus Rejected at Nazareth

Jesus returned to Galilee in the power of the Spirit, and news about him spread through the whole countryside. He was teaching in their synagogues, and everyone praised him.

He went to Nazareth, where he had been brought up, and on the Sabbath day he went into the synagogue, as was his custom. He stood up to read, and the scroll of the prophet Isaiah was handed to him. Unrolling it, he found the place where it is written:

“The Spirit of the Lord is on me, because he has anointed me to proclaim good news to the poor.

He has sent me to proclaim freedom for the prisoners and recovery of sight for the blind, to set the oppressed free, to proclaim the year of the Lord’s favor.”

Then he rolled up the scroll, gave it back to the attendant and sat down. The eyes of everyone in the synagogue were fastened on him. He began by saying to them, “Today this scripture is fulfilled in your hearing.”

All spoke well of him and were amazed at the gracious words that came from his lips. “Isn’t this Joseph’s son?” they asked.

Jesus said to them, “Surely you will quote this proverb to me: ‘Physician, heal yourself!’ And you will tell me, ‘Do here in your hometown what we have heard that you did in Capernaum.’”

A MOTHER’S CALL

We are sure you have been following the daily news which is pouring out of Armenia and Artsakh and the human sacrifices our heroic national army is giving for the glory of our homeland and for the free spirit of the Armenian nation. The history is repeating itself, and it will record this interval, as independent Armenia’s national proud moment where all three, Armenia, Artsakh and Diaspora came together to protect the borders of our Motherland and stand together in the face of adversary.

Yes we are the proud Armenian Christian Nation that have seen wars for our Christian belief and history is the witness, however we are and still will be “Us and Our Mountains” the custodians of this beautiful land where A Mother Calls to its children wherever they may be to stand together and continue to be counted in the family of nations as the land where humanity was born and where Noah ark came to stand and humanity was given another chance by our Lord to re-start, multiply and live in harmony.

We will prevail.

In view of the huge humanitarian crises, brought about by the Azerbaijan’s military aggressions against Artsakh & Armenia and the constant bombardments of civilian population areas within the region, we urge our community members to continue with their financial support by generously donating to the Hayastan All Armenian Fund UK charity. Donating to the Charity will enable us to claim a further 25% in gift-aid from the UK government at no extra cost to you.

Account Name: Hayastan All-Armenian Charitable Trust GB

Account Number: 00541896 Sort Code: 30-94-65 Reference: Aid Armenia (your name)

Cheques payable to: Hayastan All-Armenian Charitable Trust GB

Post to: c/o 23 Norman Way, West Acton, London W3 0AS

Thanking you in advance, St Yeghiche Armenian Church Parish Council

Մեկնություն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Այսօր այս գրուածքները կատարուեցին, երբ լսում էիք ձեր ականջներով...»

Աստուածասէր եւ հայրենասէր եղբայրներ եւ քոյրեր,

Իւրաքանչիւր քրիստոնեայ ամէն օր Ս.Գիրք կարդալու եւ հոգին Աստծոյ Խօսքով սնելու պահանջ եւ պարտականութիւն ունի: Էլ աւելի կարելոր է, որ Աստծոյ Խօսքը կեանք եւ կենցաղ դառնայ: Ներկայ դարում կարծես վաղուց բոլորը գիտեն Աստծոյ մասին, Աւետարանի եւ քրիստոնէութեան պատմութեան մասին: Ինչպէս Ժամանակին հոգեւոր մտածողներից մէկը նկատել է, մենք յաճախ Աստծոյ շուրջ ենք շատ խօսում, բայց ոչ Աստծուց: Աստծուն իսկապէս ունենք մեր կեանքում, երբ ոչ միայն գիտենք, կարդում ենք Իր մասին եւ Իր Խօսքը, այլեւ ապրեցնում: Այսօրուայ քրիստոնեայ աշխարհի ամենամեծ խնդիրը ըստ Աւետարանի չապրելն է: Աւելի լաւ է քիչ գիտենալ, բայց այդ գիտեցածը կիրառել, կեանքում գործադրել, քան աստուածաբանութեան դոկտորի կոչում ունենալ, բայց բարի գործերից դատարկ լինել:

Մի վանական երբ քաղաք էր իջել, տեսաւ սաստիկ մրսած մի մերկ մարդու, հանելց պարեգոտը եւ տուեց նրան՝ խորհելով. «Ինչո՞ւ ես, որ ճգնաւոր եմ համարում, հագնուած եմ, իսկ այս աղքատը, որ նույն ինքը Քրիստոս է, այսպէս մերկ եւ աստած չըջում է, եւ ես մարդասպան կկոչուեմ, եթէ սա մեռնի»: Ծանօթներից մէկը հարցրեց «Հայր Սրապիոն, ո՞վ մերկացրեց քեզ»: Նա, ցոյց տուեց Աւետարանը՝ ասելով. «Սա մերկացրեց ինձ»: Եւ երբ տեսաւ, որ չունենոր մէկին քարշ են տալիս, քաշքշում են եւ պարտքն ուզում, գրասց եւ իր Աւետարանը տուեց պարտքի դիմաց, ազատեց մարդուն, իսկ ինքը մերկ գնաց իր խուցը: Աշակերտի հարցին, թէ «Որտե՞ղ է, հայր, քո պարեգոտը, եւ ո՞ր է Աւետարանդ», ծերը պատասխանեց «Լժո՞ղ ինձ որդեակ, Այն, որ միշտ ասում էր ինձ՝ վաճառեցէք ձեր ունեցուածքը եւ տուէք աղքատներին, հէնց Իրեն վաճառեցի եւ տուեցի նրանց, որպէսզի դատաստանի օրը առաւել համարձակութիւն ունենամ» (Վարք Սուրբ Հարանց):

Սիրելիներ, մեր հաւատքն Աստծոյ հետ կենդանի հարաբերութիւն է, որ ոչ միայն դէպի երկինք է ուղղուած, այլ դէպի մեր նմանը, մեր ընկերը, մերձաւորը, եղբայրը: Գործով է այս հաւատքը կենդանի մնում, այլապէս այն փրկիստփայական տեսութիւն կամ գեղեցիկ գաղափար կմնար: Առանց գործերի հաւատքը առաքեալը մեռած հաւատք է կոչում՝ դա մինչեւ դեւերի հաւատքի հետ համեմատելով. **«Դու հաւատում ես, որ մէկ է Աստուած. լաւ ես անում: Դեւերն էլ են հաւատում եւ դողում: Ո՞վ փուչ մարդ, ուզո՞ւմ ես իմանալ. հաւատը դատարկ բան է առանց գործերի: Աբրահամը՝ մեր հայրը, չէ՞ որ գործերով արդարացաւ՝ սեղանի վրայ հանելով իր որդուն՝ Իսահակին, որպէս զոհ: Տեսնո՞ւմ ես, որ հաւատը գործակից եղաւ նրա գործերին եւ գործերով էլ հաւատը կատարեալ դարձաւ»** (Յակ. 2:19-22):

Ի՞նչ է Եկեղեցին, եթէ ոչ Քրիստոսի խորհրդական մարմինը, որ շարունակում է Փրկչի առաքելութիւնը՝ փրկութեան Աւետարանի քարոզչութեամբ, հոգիների նկատմամբ խնամքով, դէպի Երկնքի Արքայութիւն առաջնորդելով կանչը լսողներին: Դա այն է, ինչ որ Տէր Յիսուս Քրիստոս ընթերցեց՝ իբրեւ Իրենով կատարուող մարգարէութիւն. **«Տիրոջ Հոգին ինձ վրայ է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին աւետարանելու, սրտով բեկեալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու եւ կոյրերին՝ տեսողութիւն, կեղերուածներին ազատ արձակելու, Տիրոջը ընդունելի տարին հռչակելու»** (Ղուկ. 4:18-19):

Սա է Քրիստոսի խորհրդական մարմնի՝ Եկեղեցու կարելոր առաքելութեան սահմանումը: Մարդկանց նկատմամբ Աստծոյ սէրը գործնական խնամք դարձաւ, գուրգուրանք եւ զոհողութիւն: Եկեղեցու ներսում Աստծոյ կենդանի ներկայութեան ապրումն այն սիրոյ յարաբերութիւնն է, որ պէտք է ունենան Եկեղեցու բոլոր հաւատացեալները՝ եկեղեցական թէ աշխարհական: Մենք այդ կենդանի Եկեղեցու կենդանի քարերն ենք: Կորո՞ղ ենք մենք էլ, վերեւի տողերը ընթերցելով՝ ասել. **«Այսօր այս գրուածքները կատարուեցին, երբ լսում էիք ձեր ականջներով...»** (Ղուկ. 4: 21):

Սիրելիներ, մեր Հայրենիքում պատերազմ է: Այն ոչ միայն ֆիզիկական, այլեւ բարոյական, հոգեւոր, սոցիալ-տնտեսական երեսներ ունի: Այստեղ է, որ ամէն քրիստոնեայ իր հաւատքը կենդանի կերպով ապրեցնելու առիթ ունի: Չօրանանք եւ զօրացնենք Փրկչի հաւատքով եւ սիրով խնամք տանելով միմեանց եւ մանաւանդ պատերազմի իրականութեան մէջ յայտնուած մեր եղբայրների եւ քոյրերի նկատմամբ:

«Միաբան եղէք, խաղաղութիւն արէք, եւ խաղաղութեան ու սիրոյ Աստուած թող լինի ձեզ հետ»

(Բ Կորնթ. 13:11): Ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Աղօթք ի ժամու պատերազմի

(Կազմուած՝ Նպատ լերան վրայ Սր. Ներսէս Մեծի աղօթքի հիման վրայ)

Մեր ձեռքերը երկինք ենք բարձրացնում, Տեր Աստված մեր, և խնդրում ենք Քեզանից, խնայիր Քո հավատացյալների ուխտին և Քո սուրբ եկեղեցիներին, որ ստացել ես Քո Սուրբ և Պատվական Արշունով: Քո ժողովուրդին անաստված հեթանոսների ձեռքը մի՛ մատնիր, որ երբեք չասեն նրանք, թե՛ «ու՛ր է նրանց Աստվածը»:

Մեր մեղավոր սրտները դէպի Քեզ ենք դարձնում բազումողորմ Աստված, ակն ունենալով Քո առատ ողորմությանը, գթա մեզ և մեր երկիրը, մաքրի՛ր մեզ մեր պիղծ գործերից, որոնք սովորության ուժով դարձել են մեզ իբրև երկրորդ բնություն: Ընդունի՛ր մեզ, բաց մի՛ թող մեզ Քո Սուրբ ձեռքերից և մի՛ մատնիր մեզ մեր թշնամիների ձեռքը:

Արժանավորության ամբարտապան հոգով չենք կանգած Քո առաջ, այլ աղաչում ենք իբրև ողորմելի մարդիկ, որ արժանի չենք անգամ աղօթք մատուցել քեզ, չենք համարձակվում խնդրել, որ կամքիցդ ետ կանգնես կամ հակառակ վարվես Քո կամեցածին: Որովհետև Դու ես, որ ամեն ինչ ոչնչից ստեղծեցիր և ամբողջ տիեզերքն Իր բնակիչներով Քո ձեռքում պահում ես որպէս մարախ: Դու երկինքը թգովդ ես չափում և ամբողջ երկիրը Քո քիով, լեռները կշեռքի ես առնում և դաշտերը կշեռքի մեջ դնում: Դու գիտես Հոր խորհուրդները և խորհրդակից ես Նրան և Հոր հետ միասին վճռում ես դատաստանները բոլոր: Այժմ էլ արևելքն ու արևմուտքը, հյուսիսն ու հարավը դրել ես կշեռքի մեջ և կշեռքը վեր բռնած ես պահում դեռ, որ ըստ մեղքերի ծանրության դատես Քո արարածներին: Դու գիտես արարածներիդ գործերի չափն ու ամենքին ըստ իր գործերի պիտի հատուցես, որովհետև հասել է ժամը նախատանքի, հանդիմանության ու դատաստանի: Արդ մարդիկ չէ, որ դուրս եկել միմյանց դեմ ճակատելու և պատերազմելու, այլ Դու՝ Դատավորների Դատավոր, կանգնել ես երկիրը դատելու, որովհետև այս ժամը դատաստանի ժամանակն է:

Ո՛վ կհամարձակվի այս ժամին իր բերանը բանալ Քո առաջ, կամ ո՛վ է, որ գիտե Քո միտքը, որ դեռ խրատ էլ տա Քեզ:

Արդ եթե այժմ հատուցում ես մեզ մեր գործերի համաձայն, չենք կարող դեմ գնալ Քո կամքին և հակառակը խնդրել Քեզանից, այլ պետք է ասենք. «Օրհնյա՛լ ես, Տե՛ր, մեր հայրերի՝ Աստված, հավիտյանս գովաբանված և փառավորված է քո անունը, որովհետև արդար ես ամեն ինչում, որ բերեցիր մեզ վրա. ճշմարիտ են քո բոլոր գործերը, և ուղիղ են քո ճանապարհները, և քո բոլոր դատաստանները՝ ճշմարտություն: Ըստ ամենայնի ճշմարիտ դատաստան արեցիր, ինչ որ արեցիր մեզ և մեր հայրերի սուրբ քաղաք Երուսաղեմին, որովհետև ճշմարտությամբ և հիրավի բերեցիր այս ամենը մեր մեղքերի պատճառով, քանի որ մեղանչեցինք և անօրենություն գործեցինք՝ ապստամբելով քո դեմ, և առավել մեղանչեցինք ամեն ինչում: Քո պատվիրաններին չանսացինք, չպահեցինք ու չարեցինք այնպես, ինչպես պատվիրեցիր մեզ, որպեսզի բարի լինի մեզ: Այն ամենը, որ բերեցիր մեզ վրա, և այն ամենը, որ արեցիր մեր դեմ, արդար դատաստանով արեցիր: Արդ, Քո անվան համար, մի՛ լքիր մեզ խապառ և փրկի՛ր մեզ ըստ Քո սքանչելի գործերի և փառք բեր Քո անվանը, Տե՛ր, որպեսզի չամաչեն Քեզ վրա հույս դրածները, այլ թող ամոթով մնան բոլոր նրանք, որ չարիք են պատճառում քո ծառաներին, թող ամաչեն իրենց ամեն բռնությունից, և նրանց գործությունը թող խորտակվի: Եվ թող ճանաչեն, որ դու ես միակ Տեր Աստվածը, և փառավորյալը ամբողջ տիեզերքում: Եվ ամեն բանում ամբողջովին միայն Քո ամենագոր կամքը թող կատարվի, որ հզոր ես, կարող և ամեն ինչում արդար, և սիրում ես ողորմալ նեղյալներին ու տազնապալներին: Դու գիտես մեր օգուտը, Տե՛ր, և պատրաստում ես մեզ համար, ինչպես որ հաճելի է քեզ, եթե նեղությունները մեզ օգտակար են, հաճախակի դարձրու, և եթե հաճելի է Քեզ ողորմությունը՝ շնորհի՛ր մեզ:

Թող Քո կամքը կատարվի մեզ վրա, ինչպես որ երկնքում է: Եվ ինչ գա գավազանով էլ կամենաս մեզ խրատել, միշտ Քո ձեռքում ենք: Քավի՛ր, Տե՛ր, Քո ծառաների անօրինությունները, մեղքերն ու հանցանքները: Որովհետև ո՛վ է այն մարդը, որ քո հանդեպ հանցանք կամ մեղք չի գործում, ոչ ոք երկրի վրա արդար չէ, ո՛չ իսկ մեկ հոգի: Դու ես միայն, որ առանց մեղքերի ես, և արդարությունը Քոնն է միայն, Դու մեզ ոչնչից ստեղծեցիր ու այս կենդանությանը արժանացրիր, մեզ՝ հողեղեններիս իմաստուն ու խոսուն ստեղծեցիր և ցույց տվիր կյանքի ու փրկության ճանապարհները: Դարձար մեր փրկանքը, որպեսզի անմահության վիճակին հասցնես մեզ: Հիշի՛ր Քո եկեղեցին, որ Քո Սուրբ Արքամբ ստացար, և քեզ ընծայվածներին շների ձեռքը մի՛ մատնիր: Ամեն ժամ ողորմած ես, Տեր, հեռացրո՛ւ սրտմտությունդ ու բարկությունդ Քո ուխտից և փրկի՛ր Քո եկեղեցին, Տե՛ր մեր և Աստված Հիսուս Քրիստոս, որովհետև ամեն ինչ Քեզանից է և Քեզանում է, և Քեզ Ամենակալ Հոր և Կենդանարար Սուրբ Հոգուդ հետ փառք հավիտյանս: Ամեն:

Ս. Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես Ավետարանիչների հիշատակի տոն

Ս. Մատթեոսը Տիրոջ 12 առաքյալներից է, առաջին Ավետարանի հեղինակը։ Մատթեոս անունը հունական է, այն եբրայերեն Ղևի անունն է, որ նշանակում է Աստվածատուր։ Ս. Մատթեոսը նախկինում Կափառնա քաղաքում մաքսավոր էր եղել։ Անսալով Տիրոջ ձայնին՝ վաճառել էր իր ունեցվածքը, գումարը բաժանել աղքատներին, դարձել Քրիստոսի հետևորդ։ Նա Աստծո խոսքն է քարոզել Պարթևաստանում և Պաղեստինում։

Ս. Մարկոս Ավետարանիչը Բառնաբայի եղբոր տղան էր՝ բնիկ երուսաղեմացի։ Կոչվում էր նաև Հովհաննես։ Նրա մոր՝ Մարիամի տունը, Երուսաղեմում առաքյալների աղոթավայրն էր։ Կարծում են, որ սա այն Վերնատունն էր, ուր Հիսուս իր վերջին ընթրիքն է կատարել, իսկ Հոգեգալստին՝ քրիստոնեական եկեղեցին է հիմնադրվել։ Նա եղել է Ս. Պետրոս առաքյալի թարգմանիչը, ինչպես նաև Պողոսի և Բառնաբասի գործակիցներից մեկը։ Ս. Մարկոսն ամենակարճ Ավետարանի հեղինակն է։ Աստծո խոսքը քարոզել է Եգիպտոսում, որտեղ էլ նահատակվել է։ Ս. Մարկոսը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հիմնադիրն է։

Ս. Ղուկաս Ավետարանիչը երրորդ Ավետարանի հեղինակն է։ Ծնվել է Անտիոքում և ըստ ավանդության, եղել Քրիստոսի 72 աշակերտներից։ Ս. Պողոս առաքյալի վկայության համաձայն՝ մասնագիտությամբ եղել է բժիշկ։ Լսելով Քրիստոսի քարոզների մասին՝ եկել է Պաղեստին և հետևել Տիրոջը։ Աստծո խոսքը տարածել է Աքայայում, Լիբիայում, Եգիպտոսում և Թերայում։ Հռոմեացի Թեոփիլոսի խնդրանքով գրել է «Գործք Առաքելոց»-ը։ Ըստ հին ավանդության՝ նահատակվել է Թերայում։

Ս. Հովհաննես առաքյալը 4-րդ Ավետարանի, երեք ընդհանրական նամակների և «Հայտնության» գրքի հեղինակն է։ Հիսուս նրան համարել է «սիրելի աշակերտ»։ Հիսուս այնքան էր սիրում և վստահում նրան, որ խաչելության պահին Աստվածամորը հանձնեց նրա խնամքին։ Մահացել է 100 թվականին, Եփեսոսում 95 տարեկանում։

Feast of the Evangelists Sts. Mathew, Mark, Luke and John

Evangelist St. Mathew is one of the twenty apostles of the Lord. He is the author of the first Gospel. The name of Matthew is the Greek version of the Hebrew name meaning God-given. His Hebrew name has been Levi. In the past he has been a tax collector in Capernaum. Then obeying to God's will he has sold his property, distributed the money to the poor and has become one of the followers of Jesus Christ. He has preached the Word of God in Parthia and Palestine.

Evangelist St. Mark was the nephew of Barnabas. He was born in Jerusalem. He was named also John. It was the house of his mother – Mary that was the place of prayer for the apostles. It is supposed that it was the place where Our Lord Jesus Christ had the Last Supper and where the Church was founded during the Pentecost. He has been the interpreter of St Peter, as well as the friend of St. Paul and Barnabas. He is the author of the shortest Gospel. He has preached the Word of God in Egypt, where he has been martyred he is the founder of the Coptic Orthodox Church.

Evangelist St. Luke is the author of the third Gospel. He was born in Antioch. According to the tradition he is one of the seventy-two disciples of Jesus Christ. According to St. Paul he has been a physician. Listening about the Lord's Preaching, Luke goes to Palestine and follows the Lord. He has preached the Word of God in Achaia, Libya, Egypt and Teba. He has written "The Acts of the Apostles" upon the request of Theophilus of Rome. According to the tradition he has been martyred in Teba.

Evangelist St. John is the author of the fourth Gospel, three letters and the Revelation. He deserved the title of the "beloved disciple" of Christ. He was the son of the fisherman Zebedee and the brother of James. He is considered to be one of the two disciples of St. John the Baptist who followed Jesus (See Jn 1:37). Afterwards the Lord called him to Galilee and gave him the authority of apostle. John became one of the closest Disciples of Christ. Together with James and Peter he witnessed the "transfiguration" that came over Jesus while He was praying on a high mountain named Tabor, went to the valley of Gethsemane. Together with St. Mary, Holy Godmother, he stood near the cross and at the moment of crucifixion Jesus asked him to take care of the Holy Mother of God. Together with Peter he was the first who went to the tomb of Christ and later met Him near the Sea of Genneseret (or Sea of Galilee or Lake Kinneret or Lake Tiberias). Later we see him during the persecutions of Christians in Jerusalem and his success in preaching in Samaria. After the descent of the Holy Spirit John went to Asia Minor and settled down in Ephesus where he took care of the churches founded by Paul and wrote down the Gospel there. Roman Emperor Titus Flavius Domitianus (Domitian) exiled him to Patmos where he was given (and recorded) a vision from Jesus. In Patmos or Ephesus he wrote also his letters addressed to the faithful flock.

During the period of reign of Roman Emperor Nero he returned to Ephesus where he passed away in 100 AD, in Ephesus, at the age of 95.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Armenian Community in United Kingdom for the souls of all the fallen Armenian martyrs who sacrificed their lives for our homeland, also for all the innocent civilians who were killed by the enemy's indiscriminate bombing.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted:*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.